# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՎՐԱ[15]

*Մկրտումյան Լ.Յու. (ՀՊՄՀ, Երևան, Հայաստան)*
*mkrtumyan07@mail.ru*
*Ներկայացման ամս.՝ 26.08.2019*
*գրախոսման ամս.՝ 02.09.2019*
*տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019*

Հոդվածում քննարկվում են կրթական միջավայրի հոգեբանական անվտանգության խաթարման գործոններից մեկի՝ հոգեբանական բռնության դրսևորումները և դրանց կապը սովորողների ուսումնական մոտիվացիայի հետ: Բացահայտվել են սովորողների հուզական հակազդումները հոգեբանական բռնության դրսևորումների նկատմամբ և դրանց կապը ուսումնական մոտիվացիայի մակարդակի և տեսակների հետ:

***Հանգուցային բառեր՝*** *հոգեբանական անվտանգություն, հոգեբանական բռնություն, ուսումնական մոտիվացիա, մանկավարժական հաղորդակցում:*

Կրթական գործընթացի կազմակերպման ժամանակակից հումանիստական, աշակերտակենտրոն մոտեցումները ենթադրում են կրթական միջավայրի մասնակիցների հոգեկան առողջության, նրանց պոզիտիվ անձնային զարգացման, մանկավարժների մասնագիտական աճի համար բավարար պայմանների ստեղծում, գործընթացներ, որոնք հնարավոր են բացառապես կրթական միջավայրի հոգեբանական անվտանգության ապահովման պայմաններում [4 էջ՝ 129, 2 էջ՝ 80-81]:

Ժամանակակից կյանքի զարգացումների պայմաններում, երբ ծնողները ծանրաբեռնված են ընտանիքի նյութական ապահովման պարտադիր խնդիրների լուծմամբ, հաճախ բաց են թողնվում ընտանիքի՝ երեխաների կրթության և զարգացման խթանման, վերահսկման գործառույթները: Այս պայմաններում առանձնահատուկ կարևորություն է ստանում կրթության և զարգացման գործընթացը սովորողների համար գրավիչ դարձնելու դպրոցի գործառույթը: Վերջինիս արդյունավետությունը, ըստ հետազոտողների, պայմանավորված է սովորողների մոտիվացվածությամբ, դպրոցի ռեֆերենտ նշանակալիությամբ և կրթական միջավայրի մասնակիցների անձնային-վստահելի շփման պահանջմունքի բավարարվածությամբ [3 էջ՝39, 8 էջ՝ 150-151, 7 էջ՝ 387-388, 413]:

Սովորողների դպրոցական, ուսումնական մոտիվացիայի վրա ազդող գործոններից մեկն էլ հետազոտողների կարծիքով հոգեբանական բռնությունն է: Ըստ Ի.Ա. Բայովայի՝ հոգեբանական բռնությունը կրթական միջավայրի հոգեբանական

[15] Հետազոտությունների կազմակերպման և հրատարակության ծախսերը ապահովվել են ՀՀ ԳՊԿ-ի կողմից ֆինանսավորվող 11-5a.571 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում

անվտանգության խաթարման առաջին պայմանն է [3 էջ՝40]: Վ.Բ.Շապարի խմբագրությամբ նորագույն հոգեբանական բառարանում հոգեբանական բռնությունը բնութագրվում է որպես սոցիալ-հոգեբանական հարկադրական ներգործություն, որը խախտում է անձի անհատական սահմանները՝ չապահովելով նրա համաձայնությունը, նրա հոգեբանական անվտանգությունը, օրինական իրավունքները և հասցնելով անձին սոցիալական, հոգեբանական ու ֆիզիկական, կամ նյութական վնաս [6 էջ՝ 451]:

Դպրոցում հոգեբանական (հուզական) բռնության հետազոտությունները վերաբերում են սովորողների անձնային առանձնահատկություններին [1], սովորող-սովորող հարաբերությունների համակարգին [9 էջ՝ 140-142]: Հոգեբանական հետազոտություններում մանրամասն նկարագրված է նաև սովորողի հետ ուսուցչի փոխհարաբերության բռնի բնույթի բացասական հետևանքների լայն սպեկտր՝ սովորողների դիդակտոգեն նևրոզներ, հոգեմարմնական հիվանդություններ, անձի վիկտիմություն և այլն [5 էջ՝ 150-151]:

Համեմատաբար սուղ են ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ գործադրվող հոգեբանական բռնության փաստերի և ուսումնական մոտիվացիայի հետ դրանց կապի վերաբերյալ ժամանակակից հետազոտությունները: Մեր վարկածի համաձայն ուսուցիչների հոգեբանական բռնությունը իջեցնում է սովորողների ուսումնական մոտիվացիան: Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել սովորողների հոգեբանական անվտանգության, ուսումնական մոտիվացիայի և ուսուցիչների կողմից գործադրվող հոգեբանական բռնության միջև կապը:

**Հետազոտության մեթոդներն են**՝ զրույցը և թեստավորումը:

1. Սովորողների, ուսուցիչների և ծնողների հետ կազմակերպված զրույցների միջոցով բացահայտվել են ուսուցիչների կողմից գործադրվող հոգեբանական բռնության ձևերը
2. Թեստավորման միջոցով բացահայտվել են

- սովորողների՝ հոգեբանական բռնությունից պաշտպանվածության և դպրոցի կրթական միջավայրի բնութագրերով բավարարվածության մակարդակը: Կիրառվել է Ի.Ա. Բայովայի «Դպրոցի կրթական միջավայրի հոգեբանական անվտանգություն» մեթոդիկան
- սովորողների ուսումնական մոտիվացիայի մակարդակը: Կիրառվել է սովորողների ուսումնական մոտիվացիայի մակարդակի բացահայտման Մ.Ի. Լուկյանովայի թեստը:

**Հետազոտության համակազմում** ընդգրկվել են Երևանի 4 և մարզերի 5 դպրոցների 6-րդ դասարանի աշակերտներ (12-ամյա 300 մարդ), նրանց ծնողները (180 մարդ) և դասավանդող ուսուցիչները (120 մարդ): Հետազոտական աշխատանքները կազմակերպվել են 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում: Ստացված արդյունքները սեմինարների ձևով քննարկվել են դպրոցներում՝ երեխաների, ծնողների, մանկավարժների և տնօրինության մասնակցությամբ:

Սովորողների հետ կազմակերպված զրույցների, դիտումների արդյունքում բացահայտվել են ուսուցիչների կողմից գործադրվող հոգեբանական բռնության հետևյալ հիմնական ձևերը. բղավոցներ (97% 291 մարդ), անուշադրություն, անտարբերություն (97%), սպառնալիքներ (97%), բարկացկոտ կեցվածք (88% - 264 մարդ), վիրավորանքներ (88%), ոչ օբյեկտիվ վերաբերմունք (38% - 114 մարդ): Ուսուցիչները երեխաների հանդեպ գործադրում են նաև ֆիզիկական բռնություն: Հոգեբանական բռնության վերը թվարկված ձևերը կարելի է ներառել հետևյալ հիմնական տեսակների մեջ՝ սպառնալիքներ, անտեսում, անբարյացակամ և ոչ օբյեկտիվ վերաբերմունք:

Ուսուցիչների մեկնաբանմամբ նման վարքային դրսևորումները «խիստ» կեցվածքի համար են, որը որոշ անհրաժեշտ տարածություն է ստեղծում և կանխում սովորողների ավելորդ անբռնազբոս, տնավարի պահվածքը: Ուսուցիչներն այն սովորողների հետ պաշտոնական հարաբերությունների կառուցման անհրաժեշ-տություն են համարում: Ծնողները ևս մեծամասամբ հանդուրժող են նման վերաբերմունքի հանդեպ: Մեր հետազոտության արդյունքների համաձայն ուսուցչի բարկացկոտ, անտարբեր, կեցվածքի դեպքում լարվածություն և տարակուսանք է առաջանում, երբ երեխաները չեն համարձակվում հարցեր տալ, կամ վստահ մասնակցել դասին և ընդհանրապես թեթևացած շունչ են քաշում, երբ տվյալ ուսուցչի դասն ավարտվում է: Մեր դպրոցներում, չնայած ժամանակակից աշակեր-տակենտրոն, հումանիստական մոտեցումների ակտիվ ներդրմանը, դեռևս հանդի-պում են նաև ֆիզիկական բռնության դեպքեր: Մեր դիտարկումների համաձայն՝ բռնության այս տեսակի դրսևորումները պայմանավորված են դպրոցի դրվածքով և կարգապահության պահանջներով:

Ի.Ա.Բայովայի կողմից մշակված «Դպրոցի կրթական միջավայրի հոգեբա-նական անվտանգություն» մեթոդիկայից ստացված արդյունքների վերլուծությունը ներկայացված է Նկարներ 1.1. և 1.2 – ում: Պարզվեց, որ սովորողների շրջանում գերակշռում է դպրոցի կրթական միջավայրի նկատմամբ դրական վերաբերմունքը՝ 78% (234 մարդ), չեզոք վերաբերմունք ունեն 14%-ը (42 մարդ) և բացասական՝ 8%-ը (24 մարդ):

Դպրոցի կրթական միջավայրում փոխներգործության մեջ հոգեբանական բռնությունից պաշտպանվածության մակարդակի վերաբերյալ ստացված արդյունք-ներում բացակայում են հոգեբանական բռնությունից պաշտպանվածության շատ բարձր մակարդակի ցուցանիշները: Վերլուծությունը ցույց տվեց, որ հոգեբանական բռնությունից պաշտպանվածության բարձր մակարդակի ցուցանիշները գերակշռող են միջին, միջինից ցածր և ցածր մակարդակի ցուցանիշների համեմատ:







*Նկար 1.1. Սովորողների վերաբերմունքը կրթական միջավայրի նկատմամբ*
*Նկար 1.2. Դպրոցի կրթական միջավայրում փոխներգործության մեջ հոգեբանական բռնությունից պաշտպանվածության մակարդակը:*

Դպրոցի կրթական միջավայրում փոխներգործության մեջ հոգեբանական բռնությունից պաշտպանվածության մակարդակի վերաբերյալ արդյունքները մեր կողմից վերլուծվել են նաև ըստ մեթոդիկայում առանձնացված հոգեբանական բռնության տեսակների: Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ մեր դպրոցներում շատ բարձր է հոգեբանական բռնության «Հրապարակային ստորացում և վիրավորանքներ» և «Սեփական կամքին հակառակ գործողությունների կատարման պարտադրում» տեսակներից սովորողների պաշտպանվածության մակարդակը (4.1-4.5 միավոր): Միջին և միջինից բարձր են «Սպառնալիքներ» (3.6-4.2 միավոր) և միջինից ցածր է «Անտեսում» (3.2-3.4 միավոր) և «Անբարյացակամ վերաբերմունք» (2.5-3.7 միավոր) հոգեբանական բռնության տեսակներից պաշտպանվածության մակարդակը: Ընդ որում, բռնության բոլոր տեսակների համար միջինից բարձր միավորները գրանցվել են համադասարանցիների հետ (միջինը՝ 4.0 միավոր), իսկ միջինից ցածր միավորները՝ ուսուցիչների հետ փոխներգործության վերաբերյալ (միջինը՝ 3.1 միավոր է): Ամենացածրը ուսուցիչների հետ փոխներգործության հոգեբանական բռնության «Անբարյացակամ վերաբերմունք» տեսակից պաշտպանվածության մակարդակն է (2.5 միավոր):

Դպրոցի կրթական միջավայրի նշանակալի բնութագրերով սովորողների բավարարվածության մակարդակի վերաբերյալ ստացվել են հետևյալ արդյունքները. միավորների միջին արժեքը կազմում է 3.3 միավոր, որը մեթոդիկայի պահանջների համաձայն համապատասխանում է բավարարվածության միջին մակարդակին: Բավարարվածության բարձր մակարդակ է գրանցվել «Աշակերտների հետ փոխհարաբերություններով բավարարվածություն» (4.5 միավոր), «Սեփական անձի նկատմամբ հարգալից վերաբերմունք» (4.4 միավոր) և «Անձնական արժանապատվության պահպանում» (4.1 միավոր) բաղադրիչներից: Բավարարվածության միջինից ցածր մակարդակ է գրանցվել «Օգնության դիմելու

հնարավորություն» (2.3 միավոր) և «Անձնական խնդիրների ու դժվարությունների հաշվառում» (2.2 միավոր) բաղադրիչներից:

Հոգեբանական բռնությունից պաշտպանվածության բարձր մակարդակի և դպրոցի կրթական միջավայրի նշանակալի բնութագրերով բավարարվածության ցուցանիշների համադրությունը ցույց է տալիս, որ չնայած հոգեբանական բռնությունից պաշտպանվածության ընդհանուր առմամբ բարձր մակարդակին, սովորողների 42%-ը (132 մարդ) անբավարարված է օգնության դիմելու հարցում, որին զուգահեռ դրսևորվում է անբարյացակամ վերաբերմունքից՝ որպես հոգեբանական բռնության տեսակ, պաշտպանվածության ցածր մակարդակ: Սովորողների 60%-ը (180 մարդ) անբավարարված է անձնական խնդիրների ու դժվարությունների հաշվառման հարցում, որին զուգահեռ դրսևորվում է անտեսումից պաշտպանվածության ցածր մակարդակ: Հետազոտական արդյունքների այսպիսի ֆոնի վրա մեր կողմից հետազոտվել է նաև սովորողների ուսումնական մոտիվացիայի մակարդակը (տես՝ Նկար 2): Սովորողների գերակշռող մեծամասնության շրջանում բացահայտվել է ուսումնական մոտիվացիայի միջինից ցածր (60% - 180 մարդ) և ցածր (9.6% - 29 մարդ) մակարդակ, բարձր մակարդակ՝ 13 %-ի մոտ (39 մարդ) և միջին մակարդակ՝ 17.3 %-ի մոտ (52 մարդ): Անշուշտ, ուսումնական մոտիվացիայի մակարդակն ունի տարբեր աղբյուրներ՝ հետաքրքրություններ, մրցակցություն, ծնողների, ուսուցիչների հեղինակություն, սոցիալական անապահովություն, անտարբերություն, ծուլություն և այլն: Մեզ հետաքրքրել է ուսումնական մոտիվացիայի մակարդակի կոռելյացիոն կապը հոգեբանական բռնության տեսակների հետ:




*Նկար 2. Սովորողների ուսումնական մոտիվացիայի մակարդակը*

Եվ այսպես, գրանցվել է նշանակալի ուղղագիծ դրական կոռելյացիոն կապ ուսումնական մոտիվացիայի մակարդակի և կրթական միջավայրի նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև կրթական միջավայրում հոգեբանական բռնությունից պաշտպանվածության միջև ($0.5 \leq r \leq 0.7$): Ուսումնական մոտիվացիայի մակարդակի և կրթական միջավայրի բնութագրերով բավարարվածության միջև դիտվում է ուժեղ ուղղագիծ դրական կոռելյացիոն կապ ($0.8 \leq r \leq 1$):

Նշանակալի բացասական կոռելյացիոն կապ է դիտվում ուսումնական մոտիվացիայի մակարդակի և հոգեբանական բռնության անտեսման տեսակի միջև ($0.5 \leq r \leq 0.7$) և ուժեղ բացասական ուղղագիծ կապ ուսումնական մոտիվացիայի

մակարդակի ու անբարյացակամ վերաբերմունքի միջև ($0.7 \leq r \leq 0.9$): Նշանակալի կոռելյացիոն կապ է դիտվում նաև ուսումնական մոտիվացիայի մակարդակի և օգնության դիմելու հնարավորության ($0.4 \leq r \leq 0.6$) և ուժեղ կապ ուսումնական մոտիվացիայի մակարդակի ու անձնական խնդիրների, դժվարությունների հաշվառման միջև ($0.7 \leq r \leq 0.9$):

Եզրակացություններ

1. ՀՀ ժամանակակից դեռահասները դպրոցի կրթական միջավայրի նկատմամբ ունեն դրական վերաբերմունք և դպրոցի կրթական միջավայրում փոխներգործության մեջ հոգեբանական բռնությունից պաշտպանվածության բարձր մակարդակ:
2. ՀՀ ժամանակակից դպրոցներում բացակայում են դեռահասների նկատմամբ հոգեբանական բռնության հրապարակային ստորացման ու վիրավորանքների, սեփական կամքին հակառակ գործողությունների պարտադրման ձևերը: Դրսևորվող հոգեբանական բռնության հիմնական ձևերն են՝ անտեսումը և անբարյացակամ վերաբերմունքը, դրսևորվում է նաև ֆիզիկական բռնություն:
3. ՀՀ ժամանակակից դպրոցներում թույլ է դեռահասների ուսումնական մոտիվացիան:
4. Դեռահասների ուսումնական թույլ մոտիվացիան կապված է ուսուցիչների կողմից անտեսվածության և անբարյացակամ վերաբերմունքի և անհատական մոտեցման բացերի հետ:
5. ՀՀ ժամանակակից կրթական միջավայրում հոգեբանական բռնության գոյություն ունեցող ձևերը պայմանավորված են դրանց նկատմամբ ծնողների հանդուրժողականությամբ, դեռահասների կողմից հոգեբանական բռնության երևույթի ճանաչման ու նույնականացման դժվարությամբ և իրենց իրավունքների գիտակցման ցածր մակարդակով:
6. Կարծում ենք, որ ժամանակակից դպրոցներում անհրաժեշտ է կրթական միջավայրի մասնակիցների հետ կազմակերպել բազմակողմանի հետազոտական աշխատանք և ստացված արդյունքները դասարան-առ դասարան սեմինարների ձևով քննարկել նրանց հետ: Փորձը ցույց է տալիս, որ նման սեմինար-քննարկումները օգտակար են կրթական միջավայրի մասնակիցների՝ փոխադարձ հետադարձ կապի ապահովման, կամ աշխուժացման, ինքնաճանաչման և մյուսներին բացահայտման, ինքնակատարելագործման և մասնագիտական աճի և ընդհանրապես հաղորդակցման, ապրումակցման ու աջակցության հոգեբանական մշակույթի բարձրացման և կրթական միջավայրի մասնակիցների հոգեկան առողջության ապահովման համար:

## Գրականություն


1. **Զաքարյան Է.** Բռնության ենթարկվող երեխայի անձնային առանձնահատկությունները, Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրներ: ԵՊՀ 90-ամյակին նվ. գիտական հոդվածների ժողովածու: - Եր.: Ասողիկ, 2009, էջ՝ 288-299:
2. **Մկրտումյան Մ.Պ., Մկրտումյան Լ.Յու.** Սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման կառուցվածքային բաղադրամասերը / «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր. – Եր.: Գրիգոր Տաթևացի, 2014. (էջ՝ 77-86)
3. **Баева И.А.** Психологическая безопасность образовательной среды: теоретические основы и технологии создания. // АВТОРЕФЕРАТ диссертации на соискание уч. ст-ни доктора психологических наук. СПб, 2002. –44с.
4. **Берберян А.С.** Экзистенциально-гуманистическая психология как фундаментальное основание концепции личностно-центрированного обучения в системе высшего образования: монография. – Прага: Vědecko vydavatelské centrum «Sociosféra-CZ», 2018. –292с.
5. **Голубь М.С**. К вопросу организации безопасной образовательной среды как условия социальной защиты виктимного подростка // Психология трудного детства: материалы Международной научно-практической конференции. Курган: Изд-во Курганского гос. ун-та, 2014. (с.148-152).
6. Новейший психологический словарь. / под ред. **В.Б.Шапаря**. Ростов н/Д:Феникс, 2007. -806с.
7. Практическая психология образования./ под ред. И.В.Дубровиной -СПб.: Питер, 2004. -592 с.
8. Практическая психология для преподавателей /колл. авторов под рук. академика М.К. Тутушкиной–М.: <<Филинь>>, 1997. – 328
9. **Скитневская Л.В., Шардыкова М.В.** Причины жесткого обращения с детьми со стороны сверстников // Психология трудного детства: материалы Международной научно- практической конференции. Курган: Изд-во Курганского гос. ун-та, 2014. (с.140-142).


## ВЛИЯНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО НАСИЛИЯ СО СТОРОНЫ УЧИТЕЛЕЙ НА УЧЕБНУЮ МОТИВАЦИЮ ШКОЛЬНИКОВ

*Мкртумян Л. Ю. (АГПУ, Ереван, Армения)*

В статье обсуждаются проявления психологического насилия, как одного из факторов нарушающего психологическую безопасность образовательной среды, а также их связь с учебной мотивацией учащихся. Выявлены эмоциональные реакции учащихся на проявления психологического насилия и их связь с уровнем и видами учебной мотивации.

***Ключевые слова:*** *психологическая безопасность, психологическое насилие, учебная мотивация, педагогическая коммуникация.*

## INFLUENCE OF PSYCHOLOGICAL VIOLENCE OF TEACHERS ON SCHOOL MOTIVATION

*Mkrtumyan L.U. (ASPU, Yerevan, Armenia)*

The article discusses the manifestations of psychological violence, as one of the factors violating the psychological safety of the educational environment, as well as their relationship with the educational motivation of students. The emotional reactions of students to the manifestations of psychological violence and their relationship with the level and types of educational motivation are revealed.

***Keywords:*** *psychological safety, psychological violence, educational motivation, pedagogical communication.*